ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**06.03.2017թ**
-20-

Արարատի մարզպետ

Պարոն՝ Ա. Գրիգորյանին

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 30.03.2017թ. ավագանու թիվ 4 նիստի արձանագրությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2017 թ-ի մարտի 30-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 2 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

Օրակարգում

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը

Լսեցին - Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Աբրահամ Աբրահամյանը, Արմեն Աթոյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 12

Հաստատել 29.03.2017 թվականի ավագանու նիստի օրակարգը.

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
3. Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը

Որոշումն անցավ միաձայն

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Լսեցին— Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը, Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները.
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով
Ղաշտաքարի ավագանին որոշեց.

*ՈՐՈՇՈՒՄ 13*

1. Համայնքի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ գործառնական ծրագրի 4891 հոդվածից 25 000 դրամ հատկացնել նավթամթերք, բնական գազ գործառնական դասակարգման ծրագրի 5134 հոդվածին և համայնքի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ գործառնական ծրագրի 4891 հոդվածից 1000 000 դրամ հատկացնել նավթամթերք, բնական գազ գործառնական դասակարգման ծրագրի 5112 հոդվածին
2. Համայնքի պահուստային ֆոնդը սահմանել 4 900 341.3 ՀՀ դրամ:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

2. Լսեցին -- Համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու համար համաձայնություն տալու մասին հարցը ․

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Արամ Մալխասյանը, Աբրահամ Աբրահամյանը և Արմեն Աթոյանը
Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 14.01.2010թ-ի N 16-Ն որոշման պահանջներով.
Դաշտաքարի ավագանին որոշում է

# ՈՐՈՇՈՒՄ 14

1. Տալ համաձայնություն Դաշտաքար համայնքի վարչական տարածքում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 200 (երկու հարյուր) հա մակերեսով հողատարածքը տրամադրել վարձակալության 10 տարի ժամկետով:

1.2. Վարձավճարի չափը սահմանել` 1 հա համար տարեկան 550 դրամ:

Ավարտելով հաստատված օրակարգի հարցի քննարկումները` համայնքի ղեկավարը հանդես եկավ հայտարարությամբ և նիստը հայտարարեց փակված:

Որոշումն անցավ միաձայն.

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Համայնքի ղեկավար` Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար Ա.Վարդանյան